

Ընդհատուելով նուիրակութիւնը տարագիր հայք մի կերպ անջատուած են մնում կենսութեանից և մասամբ զրկուած Մայր Աթոռոյս ըստ հոգեւորին յանձանձիւ խնամարկութիւնից՝ ուստի և հետ զհետէ ի ցաւ սրտի օտարանումն:

Ահա թէ ինչ նշանակութիւն ունէր Օծումն և Օծման Իւղը Հին - Ուխտի եկեղեցու մէջ, և ինչ նշանակութիւն ունի Նոր - Ուխտի եկեղեցու մէջ:

Յ. Վ. Մ.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑԱՒԱԾԱՅԻՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

(Ե-Ե-Ե-Ե. ՍԵ-Ե-Ե. 1886 Ք. Ե.)

ԳԼ. ԺԿ.

Յովհաննէս Բ. կաթողիկոսանալուց յետոյ տաճկահայոց ու սարսկահայոց հաւանութիւնը և սուլթանի ու շահի հաստատութեան հրովարտակն ևս ստանալու համար կամեցաւ մի մի եպիսկոպոս և մի մի վարդապետ ուղարկել Կ. Պօլիս ու Պարսկաստան, բայց չըկարողացաւ ի կատար ածել, որովհետեւ Ռուսաց կառավարութիւնը 1831 Գեկում. 28 գրութեամբ *) յայտնեց որ կաթողիկոսների հաստատութիւնը պատկանումէ միայն Ռուսաց տէրութեանը, Ռուսաց գործակատարների՝ ձեռքով կըստացուի հրաման՝ որ Տաճկաց և Պարսից հայերը Էջմիածնի հետ յարաբերութիւն ունենան, իսկ հայրապետական կոնգալները և այլ թղթերը օտարերկրեայ հոյերին կըհասնին Ռուսական գործակատարների ձեռքով:

Յովհաննէս Բ. շատ աշխատեց վերահաստատել Տաճկաստանում նախկին յարաբերութիւնը, բայց հուսկ ուրեմն պարտաւորուեց բաւականաւ հետեւալ պայմաններով. Ա. Տաճկահայք պէտք է ընդունեն Էջմիածնի ընդհանրական հայրապետի գերիշխանութիւնը ըստ հոգեւորին. Բ. Ս. Միւռոնը պէտք է ընդունեն Տաճկահայք Էջմիածնի ընդհանրական կաթողիկոսից, և Գ. Բացի Սոոյ և Աղթամարայ թեմերից՝ Տաճկաստանի վարդապետք Էջմիածնի ընդհանրական կաթողիկոսից պէտք է ստանան եպիսկոպոսական ձեռնադրութիւն:

(*) Պատմ. կաթողիկոսաց Էջմիած. եր. 148 Ծան. 66.

Յովհաննէս Բ. կաթողիկոս յարաբերութեանց խնդիրը այսպէս կարգաւորելուց յետոյ սկսեց Էջմիածնի բարեկարգութեամբ զբաղուել, վերանորոգեց տալարանը և համարեա բոլոր եկեղեցական մասեանները տպեց, բարեկարգեց Մայր Աթոռոյ ժառանգաւորաց Դպրոցը, վճարեց Էջմիածնի պարտքը և բաւական նշանաւոր գումար ևս յետ ձգեց. 1830 թուին համարեա իւր նախաձեռնութեամբ Փոքր - Ղազարապատի տեղը շինուեց Սինոգի այժմեան սիւնաղարդ գաւթով շինութիւնը, և Ղազարապատի արեւմտեան կողմի սենեակները 1839 թուին ի հիմանէ նորոգեց: Այս շինութեանց հետ Յովհաննէս Բ. զբաղուեց 1783 թ. Ղուկասի օրով սկզբնաւորուած, 1808 թ. Դանիէլի հաստատած Սիւնհոգոսի գրաւոր սահմանադրութիւնը խմբագրելով՝ որ հաստատեց Նիկողայոս կայսրը 1836 Մարտ 11 ին: Հաստատեալ Սահմանադրութիւնը (Պօլօթենիա) 1837 Փետրվար 22-ին Սինոգի բացմամբ սկսեց գործադրուել ամբողջ Ռուսաստանի վիճակներում:

Կայսերահաստատ այս Սահմանադրութեամբ ռուսահայոց Հոգեւոր վարչութիւնը սոյն կազմութիւնն ստացաւ:

Ընդհանրական հայրապետը ընտրվումէ Ռուսիոյ և օտարերկրեայ հայ թեմերի մի մի հոգեւորական և աշխարհական պատգամաւորների, Էջմիածնի միաբանութեան եօթն աւագագոյն անդամների և Սինոգի բոլոր անդամների մասնակցութեամբ Էջմիածնում գումարուած համագգային ժողովով, որին նախագահումէ Սինոգի աւագագոյն անդամը՝ իրրեւ տեղակալ նախագահի Սինոգի: Ժողովը Սինոգի միջոցաւ երկու ընտրեալներէ առաջարկում թագաւոր կայսեր ի հաստատութիւն:

Ընդհանրական Հայրապետը թէ՛ Սինոգի անդամութեան և թէ՛ առաջնորդութեան համար մէկի տեղ երկու անձի անուն է առաջարկում Կովկասեան գլխաւոր կառավարութեան միջոցաւ յընտրութիւն և ի հաստատութիւն թագաւոր կայսեր:

Ընդհանրական կաթողիկոսը*) աէր է զուա եկեղեցական և կրօնական գործերը տնօրինելու անկախ Սինոգից (յօդ. 10) և առաջադրել Սինոգին հայրապետական տնօրէնութիւնները գործադրել, իրրեւ գործադիր հաստատութիւն: Իսկ Սինոգը բարձրա-

Ը (*) Կարգ. յաղագս կառ. գործոց Լուս. Հայոց եկեղ. ի Ռու. գլ 2:

գոյն վերագիտող ստեղծատեղի է և միջնորդ ամենայն ներքին և արտաքին յարաբերութեանց. Սինոդը բաղկանում է ութ անդամ-ներից, որոնք եպիսկոպոս կամ վարդապետ պէտք է լինին, նախագահն է ընդհանրական կաթողիկոսը. Սինոդի գրադրական գործերը վարում են աստիճանաւորները, որոնց ինքն Սինոդն է ընդունում և արձակում, իսկ Սինոդի գործառնութեանց վերայ հսկում է պրօկուրօրը (գառախազ) ¹ :

Վիճակաւորը ²), իւր վիճակի մէջ լիակատար առաջնորդ է, և իւր գործոց համար պատասխանատու բարձրագոյն կառավարութեան և հոգեւոր իշխանութեան առաջ. իսկ Կոնստանդնուպոլիսի ³) (վիճակային ատեան) վիճակային գործերի վերահսկող և գործադիր հաստատութիւն: Կոնստանդնուպոլիսի առաջնորդի նախագահութեամբ չորս անդամներից՝ որոնց մինը պէտք է լինի վարդապետ իսկ մնացեալքը աւագ քահանայք կամ քահանայք: Առաջնորդը նշանակում է անդամներին և տեղեկութիւն է տալիս Սինոդին (յօդ. 72, 73): Առաջնորդը (կոնստանդնուպոլիսի) իւր բոլոր գործերը առաջարկում է Սինոդի նկատողութեանը և վերջնական որոշմանը:

Կ. Հոգեւոր Կառավարութիւնը ⁴) գաւառական մի ատենատեղի է ու միջնորդ, իւր շրջանի բոլոր գործերը Կոնստանդնուպոլիսի ի տնօրէնութիւն հասցնելու. Հոգեւոր Կառավարութիւնը ինքնին, առանց Կոնստանդնուպոլիսի թոյլտուութեան ոչինչ չի կարող անօրինել, և բաւական մէ մի վարդապետի կամ աւագ քահանայի նախագահութեամբ երկու քահանայ անդամներից:

Բարձրագոյն հաստատեալ սահմանադրութեամբ Ռուսաստանի վիճակները իրանց Կոնստանդնուպոլիսի և Հոգեւոր Կառավարութեամբ էին.

Ա. Երեւանայ վիճակ. Թեմակալը նախնաւանդ սուրբութեան համեմատ է ընդհանրական կաթողիկոսը իբրեւ արքեպիսկոպոս Արարատայ (յօդ. 56), և իւր փոխանորդներն ունի Երեւանում, Ալէքսանդրապոլում, Հին - Նախիջևանում և Տաթևու վանքում: Երեւանի փոխանորդն է և Կոնստանդնուպոլիսի նախագահը, որ փոխա-նորդ Թեմակալի է կոչւում:

(1) Կարգ. յաղագս կառ. գործոց Լուս. Հ. եկեղ. ի Ռուս. գլ. 3:

(2) Նոյն գլ. 4: (3) Նոյն գլ. 5. ա. (4) Նոյն գլ. 5. . .

Բ. Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ վիճակ. արքեպիսկոպոսի բնակութիւնը և Կոնստանտնուպոլսի Քիչնեւումն են: Այս թիւի մէջ Հոգեւոր Կառավարութիւններն են Պետերբուրգում, Մոսկւայում, Նոր-Նախիջևանում և Խրիմինը՝ Գրիգորիօպօլսում:

Գ. Աստրախանի վիճակ. արքեպիսկոպոսի բնակութիւնը և Կոնստանտնուպոլսի Աստրախանումն են. այս վիճակի մէջ են արեւելեան Ռուսիայի հայ եկեղեցիքը բացի Անդր-Կովկասից. մի հատ Հոգեւոր Կառավարութիւն կայ այն ևս, Ղզլարում:

Դ. Վրաստանի և Իմերեթի վիճակ. արքեպիսկոպոսի բնակութիւնը և Կոնստանտնուպոլսի Թիֆլիզումն են. այս վիճակի մէջ են Անդր-Կովկասեան երկիրները, Հայոց Տայք (Ախալցխա և Ախալքալաք) և Վուգար տշխարհները (Ղազախ-Բորչալու և չն.): Հոգեւոր Կառավարութիւններն են Վանձախում, Պօրիում և Ախալցխայում:

Ե. Շիրուանում վիճակ. արքեպիսկոպոսի բնակութիւնը և Կոնստանտնուպոլսի Շամախումն են. այս վիճակի մէջ են Հայոց Փայտական նահանգը Աւստիսի և Աղուանից նահանգներից մի մի մասը: Հոգեւոր Կառավարութիւն չըկայ:

Զ. Ղարաբաղի վիճակ. արքեպիսկոպոսի բնակութիւնը և Կոնստանտնուպոլսի Շուշիումն են. այս վիճակի մէջ են Հայոց Արցախը, Աւստիսի և Աղուանից աշխարհները. մի հատ Հոգեւոր Կառավարութիւն կայ և այն ևս Նուխում: Վիճակները այսպէս վերակազմուելուց յետոյ, Ղարաբաղի թիւի մէջ ընկաւ և Աղուանից աշխարհը և Բաղդասար Մետրապօլիտը, որ 1820 Եփրեմ կաթողիկոսից եպիսկոպոսացած լինելով 1828-ին յաջորդել էր իւր հօրեղբայր Սարգիս Մետրապօլիտին, և 1830 թուից Ժողովրդի խնդրանք Եփրեմի թոյլտուութեամբ մետրապօլիտ տիտղոս էր կրում, Կոնստանտնուպոլսի բացմամբ Վանձառարից վարդապետաց Շուշի: Բաղդասար մետրապօլիտ, որ Վանձասարում եղած ժամանակ իւր իշխանութեան տակ եղած վանքերը շէնցել էր ահագին կալուածներ ձեռք բերելով, Վանձասարում մի դպրոց էր բաց արել որի մէջ դասախօսելու համար Նուխոյ կաղմերից յատկապէս հրաւիրել էր գիտնական Յովսէփ վարդապետին, ունեւումով Շուշում ևս սկսեց անձանձիր աշխատել և յաջողեց ձեռք բերելու Վուգար — Քեալբաջար կոչուած 110,000 գեսեաւենի չափ ընդարձակ տարածութիւնը, 1830-33 թ. լինեց Շուշույ եւ այսրի տաճար-

նորդարանը, և իւր բազմադիւն կեանքը կնքեց 1854 Յունիս 27-ին ու թողուեց Գանձասարու վանքում: Բազմաթիւ մահաւորներէն զաւելեալ Պարսկաստանի Կաթողիկոսութիւնն ու մետրապօլիտութիւնը և Աղուանից երկիրը միացաւ Ղարաբաղու արքեպիսկոպոսութեան հետ:

Սինօգի բացման տարին 1837 Հոկտեմ. 5-ին Նիկողայոս կայսրը այցելեց Ս. Էջմիածնին. կայսրը նշանաւոր հնութիւնները տեսնելուց յետոյ բոլորովին գոհ Յովհաննէս Բ. ի ընդունելութիւնից, իրատանալով իւր արքայական գթութիւնը անպակաս անել հայ ազգից և Էջմիածնից, 1000 հօլանդական ոսկի նուիրեց և հրաժեշտ տուեց դէպ ի երևան:

Յովհաննէս Բ. իւր հայրապետական իշխանութիւնը հայրաքաղաքէն 10 տարի, 1841 Նոյեմբ. ամսին մահիճ մտաւ և օրինաւոր կտակ անելուց յետոյ 1842 Մարտ 26-ին վախճանուեց ու թաղուեց Էջմիածնի զանգակատան հիւսիսային կողմը:

Ինքն Նիքիեմ կաթողիկոսի օրով երուսաղէմայ Թէոդորոս պատրիարքի մահաւոր և Նիկոմիդիացի Գաբրիէլ եպիսկոպոսի 1819 թուին յաջորդելովը երուսաղէմայ գործերն ևս խանգարուեցին: Գաբրիէլ պատրիարք իւր անհաշիւ տնտեսաւարութեան պատճառով Ս. Յակովբեանց վանքը մեծագումար պարտքի ենթարկեց և բացատրութիւն տալու համար 1824 թուին Կ. Պօլիս կանչուելով՝ Իւսկիւտարում և Զմիւռնիայում 10 տարի տարագիր մնաց իսկ կաթողիկոսի միութեան աղետալի հետեւանքի պատճառով պաշտօնանկ եղած Ազրիանօպօլցի Պօղոս պատրիարք 1824 ին ուղարկուեց երուսաղէմ իրաց վիճակը քննելու համար, որ երուսաղէմում 40 օր մնալով տեղւոյն ամեն հանգամանքը ուսումնասիրելուց յետոյ դարձաւ Կ. Պօլիս, և երուսաղէմի պարտքը վեց տարում մաս մաս վճարելու հրովարտակ ստանալով Սուլթանից՝ 1827 ին երուսաղէմ վերադարձաւ երուսաղէմայ պատրիարքական տեղակալ կոչմամբ:

Պօղոս պատրիարքը երուսաղէմայ պարտքը վճարեց ինչպէ՞ղ տնտեսաւարութեամբ, և արծաթեայ անօթները վաճառելով՝ իսկ վանքի տնտեսական պիտոյքը հոգաց միաբաններից երկու անգամ կամաւոր նուէրներ հանգանակելով *): Նա 1829 թուին

(*) Ամենք, ոչ բարեմտութեամբ, ասում են իբր թէ Պօղոս պատրիարքը

վերանորոգեց Ա. Գերիզմանի վերայ յոյներից յետոյ և լուսիններից առաջ Հայոց պատարագելու արածնութեան հրովարտակր:

Պօղոս պատրիարքի օրով եգիպտոսը, գուրս եկաւ Երուսաղէմայ իրաւածութեան տակից հետեւեալ պատճառով:

Երբ Մէհէմէտ - Ալի - Փաշայի Զանքով եգիպտոսը ինքնավարութիւն ստացաւ, տեղւոյն հայք փաշայի քարտուղար Եւսուֆեան Պօղոս պէյի միջոցաւ Երուսաղէմայ պատրիարքարանից թոյլտուութիւն խնդրեցին Երուսաղէմայ գործակալ և եգիպտահայոց հոգեւոր գործոց կառավարիչ գերմանիկի Գարրիէլ վարդապետին եպիսկոպոսացնելու: Պօղոս միաբանութեան խորհրդով բացասեց: Եգիպտահայք վիրտուրուած՝ Պօղոս պէյի ձեռքով Մէհէմէտ - Ալի - Փաշայից հրաման ստացան և Երուսաղէմից անկախ՝ Գարրիէլին Աիսուղարկիւով եպիսկոպոսացրին: Երուսաղէմացոց արժգոհութիւնը այս ապօրինի գործողութեան համար աւելի ևս զայրացրեց եգիպտահայոց, և նոքա 1832 ին ոչ միայն ընդմիշտ Երուսաղէմայ իրաւասութիւնից դուրս եկան, այլ և իւրացրին Երուսաղէմական կալուածները, որ նորից ձեռք բերելու համար Երուսաղէմ մեծամեծ ծախսեր արեց:

Գարրիէլ պատրիարք 1831 ին Երուսաղէմ վերադառնալուց և 1840 թուին մահից յետոյ յաջորդեց Զաքարիա Բ. որ Երուսաղէմի պատրիարքական փոխանորդն էր Կ. Պօլսում:

Շատ բարեյաջող չէին Կ. Պօլսոյ գործերը:

Աղաւնի մականուանեալ Ստեփան պատրիարքը 1831 Սեպտեմբեր 4 ին յաջորդելով Կարապետ պատրիարքին իւր թոյլ կառավարութեամբ չրկարողացաւ գոհացնել ժողովրդին և առաջըր առնել բողոքական քարոզիչներին՝ սրանք հռովմէականների նման սկսել էին յանուն աւետարանի խռովութեան որոմներ սերմանել հայ ժողովրդի մէջ, ուստի և 1839 փետր. 11 ին

Միաբաններին վանքից դուրս հացկերութեամբ զրաղեցնելով՝ ծածուկ նոցա սննեակները բաց է անում, և մեծ քանակութեամբ զրամներ գտնելով՝ վեր է առնում, որով ոչ միայն պարտքն է վճարում, այլ և բաւական գումար է գանձում վանքի գանձարանում:—Ականատես և ականջալուր միաբանից վկայութեամբ հերքվումէ այս կործիքը և հաստատվում այն՝ թէ Պօղոս պատրիարք ցորեան գնելու համար միայն երկու անգամ նուէրներ է հանգանակել միաբաններից:

Մարտունի (Ամասիայի) առաջնորդ Պալատցի (Պոլսոյ արուար-
ձան) Յակովբոս արքեպիսկոպոսը ընտրուեց պատրիարք :

Յակովբոս պատրիարքը Հայ մանուկների մուտքը բողոքական
դպրոցներում խափանելու համար ջանք տրեց դպրոցներ բանալ և
կարգաւորել եղածները. այսպէս, Մայր եկեղեցու և Խոս - Գիւղի
դպրոցները, և Եւսկիւտարու Երուսաղէմայ նպաստով կառաւա-
րուող գիշերօթիկ ձեմարանը կարճ ժամանակ վայելելով մի մի
ամիրայի հովանաւորութիւնը՝ մեծ վայել ստացան, բայց և ամի-
րաների եռանդի շիջանելով՝ դպրոցներն էլ կորցրին իրանց փայլը,
իսկ Յակովբոս պատրիարք գտնէ Եւսկիւղարու Երուսաղէմայ ձեմա-
րանը բարեկարգ դրութեան մէջ պահելու համար նոյն ամիրաների
ցանկութեամբ արհեստաւորներից 24 անձինք հոգաբարձու ընտ-
րեց որպէս զի հանգանակութեամբ և այլ միջոցներով դպրոցի
նիւթականը կարողանայ ապահովել :

Ժողովուրդը վաղուց արդէն տժգոհ ամիրայական կառավարու-
թիւնից՝ կամենումէր իւր գործերին տէր դառնալ ու ամիրաների
ազդեցութիւնը կտրել. ժողովրդեան ձայնին անսալով՝ Յակովբոս
պատրիարքը թէ պատրիարքարանում և թէ թաղերում ժողով-
ների հաստատեց միմեանց հետ սերտ յարաբերութեամբ. Յակովբոս
պատրիարք իւր ժողովրդականութեան համար տակի դարձաւ
ամիրաներին և տեսնելով որ ամիրաների գովաւակութեան պատ-
ճառով չի կարողանում գործ շինել՝ 1840 թգոստ. 18ին հրա-
ժարուեց, և մինչև հրաժարականը կընդունուէր՝ տեսնելով որ
շատ գործեր երեսի վերայ են մնում՝ փսիեց պատրիարքարանի
դուռը և կամովին գնաց Փրկչի Հիւանդանոցը աւելով. « Անու-
րոյ անօգնականներին հիւանդանոց վայել է. էլ ինչո՞ւ եմ
տատամնում » *) :

Թէև ամիրաների ցանկութեամբ նորից Աղաւնի Ատեփան ե-
պիսկոպոսը պատրիարք ընտրուեց, սակայն ժողովրդեան ցանկու-
թիւնն ևս կատարուեց. որովհետև Բարձրագոյն Դուռը հրաման
տուեց որ ազգից ընտրուած 24 անձինքը հսկեն ազգային ել և
մուտքին և պատրիարքարանի արկղին : 24 - ների ժողովրդորովհետև
արքունի հրովարտակով կազմուած չէր, այլ մի հրամանատամնով,
ուստի և ամիրայք իրանց կողմն ունենալով Բ. Դուռը՝ արգելք

(*) Ա. Պէրպեր. Հայոց պատմ. զԼ. ԴԳ.

էին լինում նորա գործաւարութեանը և ծաղրում. ժողովուրդը ահագին բազմութեամբ Աւլթանին բողոք մատուցանելով՝ խրհրհք աղգային գործերը ազատել լուծալալիս ամիրաներից և պաշտօնանկ անել Ստեփան պատրիարքին. թէև կատարուեց ժողովրդի յանկու թիւնը և 1841 Սեպտմ. 11 ին պատրիարք ընտրուեց Կ. Պօլսեցի Աստուածաաւր արքեպիսկոպոսը, սակայն 24 - ներից մեծ մասը իրրեւ գլխաւոր խռովիչներ ամիրաների գրգմամբ սքոթուեցին:

1844 Յունիս 26 - ին Ջմիւռնիոյ արքեպիսկոպոս Մատթէոսը ընտրուեց պատրիարք. սա ամիրաներին և ժողովրդին միմեանց հետ հաշտեցրեց աղգային գործերը զեկաւարեւու համար մի ժողով կազմելով՝ որի անդամների 16 - ր ամիրաներից և 14 ր ամիրաներին հաճելի արհեստաւորներից էին. այսպիսի ընտրութեամբ կազմուած վարչական ժողովը սկիզբն զարձաւ տաճկահայոց ապագայ ուսմանադրութեանը:

ԳԼ. ԺԴ.

Յովհաննէս Բ. - ի մահից յետոյ առաջին անգամ Պօլսփենիայի համեմատ 1813 Ապրիլ 13 տաճկահայոց պարսկահայոց և ռուսահայոց հոգեւոր և աշխարհական պատգամաւորների մասնակցութեամբ կաթողիկոսական ընտրութիւն եղաւ և ընտրեալներն էին Նոր - Նախիջևանի և Բեսսարաբիոյ արքեպիսկոպոս Ներսէս Աշտարակեցին միաձայնութեամբ (26 ձայն) և Զաքարիա պատրիարք Երուսաղէմի՝ ձայնից համեմատական առաւելութեամբ (17 ձայն). Նիկողայոս Ա. կայսրն 1813 Օգոստ. 10 ին հրովարտակով Ներսէսին հաստատեց կաթողիկոս: Ներսէս իրրեւ Գանիէլի ջերմ կուսակից և իրրեւ գործունեայ հոգեւորական՝ շատ յարգուած էր ամենքից, ուստի և, նորա անունը Մատթէոս պատրիարքը իւր կազմած աղգային ժողովի միջոցաւ առանց ընդգիմութեան հանդիպելու ծածկաստանի եկեղեցիներում յիշատակել տուեց: Ներսէս Ե. Ռուսաստանի հայաբնակ քաղաքները այցելելով 1847 - ին Էջմիածին ժամանեց և նոյն Յունիս 9 - ին սուրբ օծումն ընդունելուց յետոյ աշխատեց վերականգնեցնել տաճկահայոց՝ Մայր Աթոռի հետ նախկին յորաբերութիւնը: Ներսէս Ե.

կամենում էր փերաճատատեղ նուիրակութիւնը և հաստատել Կ. Պօլսում կաթուղիկոսական մի փոխանորդութիւն. Կ. Պօլսոյ պատրիարքարանք Մատթէոս պատրիարքի միջոցաւ մերժելով նուիրակութիւնն ու փոխանորդութիւնը, համաձայնեցաւ որ պատրիարքը համարուի նաեւ կաթուղիկոսի փոխանորդ. ուր Ս. Միւռնը ուղղակի պատրիարքի անուամբ ստացուի և պատրիարքարանից բաժանուի որոնց հարկաւոր է. գ. որ յանուն Ս. Էջմիածնի զանձանակ հաստատուի տաճկահայոց եկեղեցիներում և գոյացած արգիւնքը Էջմիածին ուղարկուի պատրիարքարանի միջոցով և դ. որ Էջմիածնի կաթուղիկոսը համարուի Ս. Լուսաւորչի օրինաւոր յաջորդ և քնդհանրական հայրապետ. Ներսէս Ե. գոչ Մատթէոս պատրիարքի և Յակովբ Երեման պատրիարքի դէպի Էջմիածինը ջերմեռանդն զգացման համար. նայա հովսէսոփեսական կանքեռ պարգևեց և տաճկահայոց յորարերութիւնը ամբողջելու համար ի պահանջել հարկին միշտ գրամական նպատակ էր հասցնում նոցա:

Ներսէս Ե. կաթուղիկոս տաճկահայոց հետ յիշատակեալ յարաբերութեանց գործը կարգադրելուց յետոյ սկսեց Էջմիածնի զանազան շինութեամբ զբաղուիլ. նա վանքի տրեւելեան տրտաքին գաւթից անառնանոցը փախադրեց վանքի պարսպից դուրս իւր 1849 թուին շինած նոր գոմանոցը՝ որ կանոնաւոր շինութեանց համար պլան է կոչվում. Ս. Գայիանէի վանքից դէպի հարաւ առասպարում անտառ ձգեց, և այս անտառը սեռղելու համար Ղազարապետի հարաւային զրան հանգէտ շինեց և փերաշինեց մի ընդարձակ լճակ խարտեալ քարով մօտ հինգ գրկաշափ խորութեամբ և կէս փերսա շրջապատով:

Ներսէս Ե. շերամապահութեան և շաքարի գործաւան ևս շինեց, որոնք յաջողութիւն յունեցան: Նա իւր բոլոր ուշադրութիւնը ընծայելով Աթոռոյ տնտեսական մասին - անխնամ թողեց գրպոցը և տպարանը՝ որոնք կորցրին իրանց առկայծեալ փողը. նա շատ էր համարում ունենալ սյնակիսի վանականներ, որոնք տնտեսական մասը կառավարելով թեթեւացնէին վանքի ծախքը: Վանքի տնտեսական մասը կառավարելու համար առանձին կանոնադրութեամբ վանական կառավարութիւն հաստատեց մի նախագահից և երկու անգամներէից բաղկացած:

Ներսէս Ե. որպէս զի կարողանայ իւր սկսած շինութիւնները

ի գլուխ բերիլ՝ թեմականների տեղ կառավարիչներ նշանակեց, իսկ յաջորդութիւններում և գործակալների տեղ՝ աշխարհական անձինք, որոնցից ուղղակի ստանումէր յիմակային արգիւնքները և գործադրում։

Ներսէս Ե. Էջմիածնում տեղակալ նշանակելով Սինոդի աւագ անդամ Արաքածունի Ղուկաս արքեպիսկոպոսին՝ ինքն մեծ մասամբ Թիֆլիզումն էր կենում, և Թիֆլիզումն էլ 1857 Փետրուարի 13 - ին խորին ծերութեան մէջ կաթուածով վախճանուեց, և մարմինը հանգիստւոր յուղարկուորութեամբ բերուելով Էջմիածին՝ թաղուեց զանգակատան հարաւակողմը, Դանիէլ կաթուղիկոսի գերեզմանի մօտ։

Մինչ Ներսէս իւր հայրապետական գործերով էր զբաղուած՝ Կ. Պօլսոյ պատրիարքարանը նորից կաթողիկական խնդրով զբաղուելու հարկի մէջ ընկաւ, թէ և Կ. Պօլսոյ պատրիարքը եկեղեցական խնդրոց մէջ մի արքեպիսկոպոսից աւելի ձայն չունի, բայց ինչպէս Պօղոս նոյնպէս և Մատթէոս պատրիարքները իրանց իրաւասութիւնից բարձր կրօնական խնդիրների մէջ մտնելով՝ խոշոր սխալ գործեցին։ 1858ին Կ. Պօլիս եկաւ Հռովմայ պապի արտակարգ նուիրակ Ֆէրիէրի կարգինալը և նորից սկսուեց միութեան խնդրի վերայ խօսուել։ Ֆէրիէրին Հայոց եկեղեցին մուտրեալ համարող մի տպեալ կոնդակ ուղարկելով Մատթէոս պատրիարքին՝ առաջարկում էր թողուլ մուտրութիւնը և միանալ պապական եկեղեցու հետ։

Մատթէոս պատրիարք կամեցաւ կարգինալի այս տնտեղի վարմանց համար բողոքել Բարձրագոյն Ղրանք, բայց Տատեան վառօդապետ Յովհաննէս և Պալեան արքունի ճարտարապետ Կարապետ տմիրաները խորհուրդ առին չբողոքել, խոստանալով այցելութեան ազգաւ տեսութեան գնալ կարգինալին, և յայտնել պատրիարքի վիշտը Հայոց եկեղեցին մուտրեալ համարելու համար, խնդրելով ցոյց տալ Հայոց եկեղեցու մուտրութիւնները։

Տատեանի և Պալեանի այցելութիւնից յետոյ եկեղեցական խնդրոց մասին խորհելու համար Մարտի 25 - ին Մատթէոս պատրիարքը և կարգինալ Ֆէրիէրին հրաիրուեցին Բէշիքտաշ Տատեանի տունը, ուր կարդինալը իւր թարգմանի հետ և Մատթէոս պատրիարքը Տէրոյեանց Բրուտայի Յովհաննէս վարժապետի հետ տառնձեալան կրօնական խնդրոյ մասին խօսելու։ Վիճարա-

նութիւնը այն հետեւանքն ունեցաւ, որ կարգինալը խոտտութանց Հայոց եկեղեցու ուղղափառութիւնը: Հռովմէական Հայոց պատրիարք Անտօն Հասուն լսելով այս՝ ժողովեց կաթողիկ աշխարհական և հոգեւորական անձանց և նոյն ինքն կարգինալին, հարցրեց կարգինալից պատրիարքի հետ տեսակցութեան հետեւանքը. կարգինալը պատասխանեց որ ինքն ուղղափառ է գտնում Հայաստանիայց եկեղեցին և այդպէս էլ վկայելու է Հռովմում: Հասուն և ժողովականք համոզեցին կարգինալին որ նա խարուած է, որովհետեւ հայք այնպէս չեն դաւանում ինչպէս խոտտանումն: Մատթէոս պատրիարք չորս օրից յետոյ երկրորդ տեսակցութիւն ունեցաւ կարգինալի հետ Այի - Ստեֆանօյում. այս տեսակցութիւնը այն հետեւանքն ունեցաւ, որ Մատթէոս զայրացած լատին և հռովմէական կղերի հաւատաքննութեան և յայտնի խոտտութեանը չը հաւատալով՝ որտի գաղտնեացն ևս թափանցելու յուսկնութեան վերայ՝ թողեց խորհրդի սենեակը և դուրս եկաւ. հեռացան և միւսները: Հետեւալ օրը շատ վաղ Մատթէոս պատրիարքը վերադարձաւ Կ. Պօլիս և ուղղակի Յունաց պատրիարքարանը գնալով՝ յայտնեց գործի եղելութիւնը: Յունաց պատրիարքը ծիծաղելով յայտնեց որ ինքն ևս է ստացել յունարէն գրով մի կոնգով և արժանապէս յանդիմանութեամբ պատասխանելով՝ վերջացրել է բոլոր գործը:

Մատթէոս պատրիարքի տեսակցութեան ազդեցութեան տակ Յունաց պատրիարքարանը յայտնեց Բարձրագոյն Դրանը կարգինալի մասին՝ թէ նա ժողովրդի մէջ խռովութիւն է ձգում կրօնական խնդիրներ արծարծելով և քրիստոնէական եկեղեցիքը մոլորեալ համարելով. իսկ Բարձրագոյն Դուռը Կալղիաջուց դեսպանի միջոցաւ ստիպեց կարգինալին հեռանալ Կ. Պօլսից, և նա վերադարձաւ Հռովմ:

Մատթէոս պատրիարք Հայաստանիայցս եկեղեցւոյ չափազանց նախանձախնդրութեամբ սկսեց հալածել բողոքականացած հայերին մինչև անգամ եկեղեցում նդովելով և բանադրելով նոցա. պատրիարքի այս նախանձայուկութիւնը աւելի ևս սաստկացրեց բողոքականութեան ճարակը, որոնք վայելելով Ամիրիկայի Միացեալ Նահանգաց, Պրուսիոյ և Անգլիոյ բողոքական պետութեանց դեսպանների պաշտպանութիւնը 1850 - ին առանձին կրօնական համայնք ճանաչուեցին և 1853 թուին բոլորովին անջա-

տուեցին հայ պատրիարքարանի իրաւասութիւնից առանձին կրօնապետ ունենալով:

Ամիրաները սկզբում ժողովրդի ճնշման տակ չը համարձակելով միանգամից պաշտօնանկ անել Մատթէասին, նորա իրաւունքը ահմանաւիակելու համար 1847-ին սուլթանի հրովարտակով պատրիարքի նախագահութեան տակ երկու ժողով հաստատուցին առաջինը քսան աշխարհական անձինքներից բաղկացած՝ որ կոչուեց Գերագոյն ժողով (յետոյ քաղաքական), իսկ երկրորդը՝ տասն և չորս հոգեւորականներից բաղկացած, որ կոչուեց և կոչվում է Արօնական ժողով:

Մատթէոս ամիրայական դասու սախամամբ 1818 Հոկտմբ 1 հրաժարուեց պատրիարքութիւնից և դարձեալ ընտրուեց Յակովբոս:

Մատթէոս հրաժարուելուց յետոյ մինչև 1853 Մայիս 11 մնաց Կ. Պօլսոյ Օրթագեղում՝ իւր հայրենի տանը, այնուհետև մի և կէս տարի ևս վարելով Նիկոմիդիոյ առաջնորդութիւնն ու Արմաշու վանքի վանահայրութիւնը, դարձեալ վերադարձաւ Օրթագիւղ մինչև որ 1857 Փետր. 13-ին վախճանուեց Ներսէս Ե:

Ս. Էջմիածնի Համալգային Ընտրողական Ժողովում Տաճկահայոց յարաբերութիւնը Մայր Աթոռի հետ ամրադնդելու համար կաթողիկոսական տեղակալ Առկաս Արքեպիսկոպոս Արագածունի ինքնին հրաժարուելով ընտրելիութիւնից առաջարկեց միայն տաճկաստանի եպիսկոպոսներից ընտրել կաթողիկոս, և Մատթէոս որ իւր վստահ ու համարձակ ընտրութեամբ, Հայաստանեայց եկեղեցւոյ չափից աւելի նախանձախնդրութեամբ, իւր հեղինակած բազմահատոր կրօնական գրքերով և ժողովրդականութեամբ հաւանական ընտրելիներից առաջինն էր թէ պատրիարքութեան և թէ կաթողիկոսութեան. 1858 Մայիսի 17 ին ընտրողական ժողովի քուէարկութեամբ համարեա միաձայն, իսկ Պրուսայոս Գէորգ եպիսկոպոսը համեմատական առաւելութեամբ (23 ձայն) իջրեա առաջին ընտրեալներ առաջարկուեցին ի հատուտութիւն թագաւոր կայսեր. Մատթէոս արքունի հրովարտակով հատուտուեց կաթողիկոս և կուսովարութեան ու Էջմիածնի հրաւիրակների ուղեկցութեամբ 1859 Ապրիլի վերջերին դուրս գալով Կ. Պօլսից Յունիսի 7-ին Էջմիածին հասաւ և Օգոստ. 15-ին Ս. Սծումն ընդունելուց յետոյ սկսեց վարել իւր հայրապետական իշխանութիւնը:

Մատթէոս Կ. Պօլսեցի գեռ Պօլսից գորս չէր եկել, Յակովբոս պատրիարքը 1858 Հոկտմ. 7 - ին ծերութեան պատճառով հրաժարուեց պատրիարքութիւնից և յաջորդեց Բրուսայի Գէորգ եպիսկոպոսը, այն ժամանակ, երբ խմբագրութեւր Տաճկահայոց Սահմանադրութիւնը: Գէորգ պատրիարքի օրով Գերագոյն և Կրօնական ժողովները բոլորովին կորցրին իրանց նշանակութիւնը և ամիսներով չէին գումարւում: Գէորգ, որ կամենում էր տիրաբար վարել իւր իշխանութիւնը, ընդ ահամբ էր նայում թէ Գերագոյն և Կրօնական ժողովների և թէ մանաւանդ խմբագրւող Սահմանադրութեան վերայ, մանաւանդ վերջինս հաճելի չէր իրան որպէս պատրիարքական իշխանութիւնը սահմանափակող մի կանոնադրութիւն:

Մինչ Գէորգ պատրիարք հնարք էր որոնում կողմնակի կերպով խափանել Սահմանադրութիւնը, ժողովրդի ստիպմամբ սարտաւորուեց 1860 Ապրել 21 - ին հրաժարուել և յաջորդեց Ագրիանօպօլսեցի Սարգիս արքեպիսկոպոսը. Գէորգ պատրիարքութիւնից հրաժարուելուց յետոյ մի առ ժամանակ (մինչև Սահմանադրութեան ընդունուիլը) մնաց Կ. Պօլսում և տքնում էր հաւատանցներ՝ որ ինքն սահմանադրաւէր լինելուն համար է պատրիարքութիւնից արձակուել. ժողովուրդը յուզուեց և պահանջում էր որ առաջ ընդունել Սահմանադրութիւնը և վաւերացնելով առաջարկել ի հաստատութիւն: Կային՝ որ հակառակ էին Սահմանադրութեան, դատի և ժողովուրդը բաժանուեց Սահմանադրական և Հակասահմանադրական կուսակցութեան. Սահմանադրականը, որ լուսաւորեալ էին կոչւում, ամենայն եռանդով աշխատում էին Սահմանադրութիւնը հաստատել տալ իսկ Հակասահմանադրականը (պահպանողանները), որ խաւարեալներ էին կոչւում, Սահմանադրութիւնը նկատելով որպէս ճնշումն եկեղեցական իրաւանց, հակառակն էին պնդում. որովհետև Սահմանադրութեամբ եկեղեցական իշխանութիւնը բոլորովին աշխարհականացած պիտի լինէր:

Սատկայած յուզմունքը հանդարտացնելու և ժողովրդին խաղաղացնելու համար ծերունի Յակովբոս հրաժարեալ պատրիարքի, որ մեծ համարումն ունէր, Սարգիս պատրիարքի հետ մեծ ժողով կազմեց, որից բացակայ էր միայն նոր հրաժարում Գէորգ պատրիարքը. ժողովի մէջ կարգացուեց Սահմանադրութիւնը և

նկատուելով որ եկեղեցու և կրօնի գէժ բան չկայ, ժողովական-
ներին ստորագրութեամբ վաւերացուեց:

Սահմանադրութեան տետրակը հաստատուելով կառավարու-
թիւնից՝ գործադրութեան մէջ մտաւ, որով թէ և Սահմանադրա-
կան և Հակասահմանադրական կուսակցութեան վէճերը առ ժա-
մանակ դադարեցին, բայց նորից, և աւելի ևս սաստկութեամբ
սկսուեցին Երուսաղէմայ պատրիարքութեան պատճառով:

Երուսաղէմայ Յովհաննէս պատրիարքը 1860 Դեկտմբ. 23 ին վախ-
ճանուեց բաւական գումար թողնելով գանձարանում: Կ. Պօլսոյ ազ-
գային Երեսփոխանական ժողովը որոշեց մի եպիսկոպոս նշանակել
Երուսաղէմայ առժամանակեայ կառավարիչ, ել և մտից հաշիւը
ղննել և ապա ըստ Սահմանադրութեան*) նոր պատրիարք ընտրել:
Երուսաղէմայ պատրիարքութեան հաւանական ընտրելիներն էին
Զմիւռնիայի Պօղոս, Ազրիանուպօլսոյ Արիստակէս և մանաւանդ
Բրուսայի Գէորգ արքեպիսկոպոսները. Երուսաղէմացիք (խիթալով
Գէորգից) և Հակասահմանադրականք պնդումէին որ, Երուսաղէ-
մայ պատրիարք ընտրուի տեղւոյն միաբաններից. և ահա ծագեց
«ներսէն» ի և «զրսէն» ի ծանուցեալ խնդիրը: Այս տարաձայ-
նութեանց պատճառով պատրիարքական ընտրութիւնը ուշացաւ:
Երուսաղէմայ միաբանք և առհասարակ «ներսէն» - ի կուսակ-
ցութիւնը խնդիրը զուտ կրօնականի դարձրեց հիմնուելով Աւնեցի
Կարապետ Գ. կաթողիկոսի 1726 - ին Կ. Պօլսում կազմուած
ժողովի վերայ, որով նշուիլիք արգելւում էր դոքսեցի պատրիարք,
վէքիլ և փոխանորդ կարգելը: Բաւական չը համարելով որ ժամա-
նակակից Հաննէ Երուսաղէմացին իւր պատմութեան մէջ՝ մէջ է
բերում այս ժողովը իւր որոշումներով, Երուսաղէմայ պատրիար-
քութեան Կ. Պօլսոյ փոխանորդ Սահակ վարդապետը յատուկ
մարդ ուղարկելով Եջմիածին՝ այս ժողովոյ որոշումը հաստատող
մի կոնդակ ստացաւ **) Մատթէոս կաթողիկոսից, Հոգեւորական-

(*) «(Ընդհանուր ժողով կը գումարուի) 3. Երուսաղէմայ և Պօլսոյ պատ-
րիարքաց ընտրութեան համար», Հին Սահմ., գլ. Ա. 12.

(**) Հանգ. Մատթէոս կաթողիկոս ի սէր և ի խաղաղութիւն յորդորե-
լուց յետոյ գրումէ

«Արդ՝ քանի ամօք յառաջ եհաս ի լուր մեր մահն Գերապատիւ Պատ-
րիարգին Երուսաղէմի Արքաղան Յովհաննէս Արքեպիսկոպոսի ի 25 Դեկ-
տեմբերի անցեալ ամի և աւագ Լուսարարի նորա Գէորգ Եպիսկոպոսի սա-

ները առհասարակ երուսաղէմաց միաբանութեան կողմն էին և Սարգիս պատրիարք կաթողիկոսի այս կոնդակը բաղմամբիւ օրինակներով տպել տալով՝ բաժանեց եկեղեցեաց ի լաւ ժողովրդեան կարգալու համար:

Կեռ «ներսէն»-ի և «գրսէն»-ի ինկիրը ստատութեամբ յուղփումէր, երբ երեսփոխանական ժողովը Սահմանադրութեան մէջ ինչ ինչ կէտեր բարեփոխելով՝ առաջադիւ էր ի բարձրագոյն հաստատութիւն, որ փոքր ինչ ուշ տեղի ունեցաւ: Ժողովուրդը կարծելով թէ պատրիարքարանի թուլութեան պատճառով է ուշանալը, գրոհ տուեց դէպի պատրիարքարան, պահանջեց Սահմանադրութեան շուտափոյթ հաստատութիւնը և Սարգիս պատրիարքի հրաժարականը: Սարգսին 1861-ին փոխանակեց Նիկոմիդիոյ Ատեմիաննոս եպիսկոպոսը իբրեւ պատրիարքական տեղակալ մինչև նոր պատրիարքի ընտրութիւնը:

Կայն՝ յոյժ յոյժ ցաւմբ ի հոգիս, զի ցայսօր ժամանակի չէ որ յաջորդեալ յաթոռ նորա ի միաբանից տեղւոյն, և յայտոսիկ աւուրս յանակընկալս լսելի եղև մեզ, որպէս թէ՛ բազում հակառակութիւնք, կազք, կոխք և ատելութիւնք հակառակ աւետարանական սիրոյն Քրիստոսի՝ ծագեալ են ի Ձեզ՝ զի ոմանք ի Ձէնջ առանց իրիք հեռատեսութեան՝ ոչ քաջ կշռելով զանցեալսն ընդ ազագայ վերահաս վտանդաց՝ յարտաքին եպիսկոպոսաց կամին զոր պատրիարք կացուցանել Սրբոյն Երուսաղէմի, իսկ այլք բարեպաշտօնք զնոյն անցեալ վտանգն առաջի իւրեանց հոգեկան աչացն հեռատեսութեամբ պատկերադրելով՝ կամին զոմն արժանաւոր ի միաբանիցն ընտրել յայն պաշտօն իբր զհմուտս ներքին և արտաքին կառավարութեանց տեղւոյն: Իսկ մեք՝ յետ լսելոյ զայտոսիկ ցաւալի լուրս, ընդ երկրորդին ցուցանելով զմեր համաձայնութիւն և զբարեհաճութիւն, այսու մերով հայրապետական կոնդակաւ յայտ առնեմք ամենասիրելի ազգիս Հայոց՝ բնակելոց ի Տաճկաստան ուշի ուշով ընթեռնելով զՀաննէ պատմագիր, յորմէ կարէք քաջ տեղեկանալ թէ նա որպէս ականատես վկայ և փոխանորդ կամ տեղակալ պատրիարքին Երուսաղէմի ո՞րպէս գօժէ զօրէն Երեմիայի զկործանումն Երուսաղէմի ընդ ձեռն եկամուտ պատրիարքաց նորին, կամ աշխարհական փոխանորդացն Վ. Պօլսի, և ի՞նչ իւրիք զառաջս կարասցին առնուլ այնպիսի աւերման վնհալայր տնօրինական տեղեաց որ մեծ պարծանք է հայազգեաց մերոց քան զայլ ամենայն պարծանս, և իբրու օրէնք յաւիտենական հաստատմք վերստին զայնոսիկ երիս յօդուածս հաստատեալս հարկաւոր ամօք յառաջ ի Սրբազան ծայրագոյն պատրիարք կաթողիկոսէ ամենայն Հայոց Տեառն Վարապետէ Աւլնեցւոյ ի նախորդէ մերմէ ի Վ. Պօլիս, համաձայն խորհրդակցութեամբ պատրիարքին Վ. Պօլսոյ Եովհաննէս Բրբեկիս-

Հենց այս ժամանակ 1862 - ին լսուեց Ձէյթունի ապստամբութեան լուրը՝ ապստամբութիւնը տկուելէր Ալաբաշ հայ և Ֆէթմայ տաճիկ գիւղերի գիւղական վեճոյ։ Մարաշի փաշան տաճիկներին պաշտպանելու համար անխոյեմաբար կրօնական պատերազմ է հրատարակուի՝ Հայոց դէմ։ Հայք գիմադրում են նոյնպէս կրօնական պատերազմով, առաջնորդուած եկեղեցական դասից խոյ խոյլառով։ յաղթանակը հայք են տանում։ Պատրիարքարանը Ձէյթունի մասին ճիշդ և մանրամասն տեղեկութիւն ստանալու

կոպոսի և Նորին Ս. Նրուսաղէմայ պատրիարքի Գրիգոր ճշնագրեաց Հայրապետի և վարդապետաց և քահանայից և բարեպաշտօն իշխանաց և հասարակութեան Հայոց Տաճկաստանի, որք են.

«Ա. Եթէ որ՝ յայսմ հետէ եկամուտ որ, որ ի տունն այն չիցէ մնեալ և զելեմուտ նորա չիցէ իմացեալ, և յանդգնիցի առաջնորդ լինել նմա, կամ վէքիլ՝ նղովեալ եղիցի».

«Բ. Եթէ որ՝ յայսմ հետէ զաշխարհական որ «պապա» անուամբ կամ այլ ինչ կոչմամբ առնէ վերակացու Սրբոյ տանն այնորիկ՝ նղովեալ եղիցի».

«Գ. Եթէ որ՝ յայսմ հետէ պատճառ լիցի զպատրիարքութիւն Սրբոյն Նրուսաղէմի կցել ընդ առաջնորդութեան Առստանդնուպօլսոյ կամ՝ այլ ինչ տեղւոյ, որ մեծ պատճառ այն էր Սրբոյ տանն աւերման՝ նղովեալ եղիցի».

Աստի և նղովեմք զայնոսիկ, որք պատճառ լինիլ յանդգնին զհայրապետաւոր զայնոսիկ կանոնս հաստատեալս փասն պայծառ պահպանութեան սրբոց տնօրինական տեղեացն և սրբոց Յակօբեանցն փանոց քակտել, լուծանել և յարտաքին եպիսկոպոսաց զոր նստուցանել այսօհետեւ յԱթոռ պատրիարքութեան սրբոյն Նրուսաղէմի, և օրհնեմք այսու մերով հայրապետական կոնդակաւ զայնոսիկ՝ որք ջատագով և պաշտպան են և լիցին վերոգրեալ կանոնացն պահպանութեան ի մշտնջենաւոր պայծառութիւն սրբոյն Նրուսաղէմի, և զորս բառնան զտարածեալ դալմակղութիւն յազգիս մերում:

Յաւարտ բանիցս մաղթեմք ի Տեառնէ զհօր սիրոյ պատուիրանապահութեան իւրոյ բարբոթել ի սիրտս ձեր, որով լինել ձեզ ճշմարիտ աւանդապահք սրբոց Հարցն կանոնադրութեանց և զամենայն Աստուածահաճոյ դործս ձեր յաջողել ձեզ բարութեամբ բազմաւ՝ իւրով անսահման բարեբարութեամբն. ամէն:

Զայս մեր կոնդակ պատուիրեմք ընթեռնուել յամենայն եկեղեցիս Կ. Պօլսոյ և տարածել յամենայն փիճակս Անատօլիոյ և Ռումելիի ի տեղեկութիւն և յապագայ զգուշութիւն ամենից հայկազանց հարադատ որդւոց սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Առսաւորչի մեծին պարթեալ:

Համար Վարժապետեան Ներսէս վարդապետին ուղարկումէ Զէյթուն. սակայն նա առանց Զէյթունի գործերին վերահասութիւն գործելու՝ զնուլէ Սիս, եպիսկոպոս է ձեռնադրւում և վերադառնում Կ. Պօլիս:

Խռովութեան պատճառները քննելու համար Մարաշում մի մասնաժողով է կազմւում, որ սկսում է կողմնապահութեամբ տաճիկներին պաշտպանել: Զէյթունցիք տեսնելով որ գործը վտանգաւոր կերպարանք է ստանում, պաշտպանութիւն խնդրելու համար մի մի վարդապետի առաջնորդութեամբ պատգամաւորութիւններ են ուղարկում Փարիզ՝ Նապօլէօն Գ - ին և Կ. Պօլիս՝ Բարձրագոյն Դրանը:

Բարձրագոյն Դուռը սաստիկ զայրացած Փարիզ պատգամաւոր ուղարկելուն համար՝ եպարքոսի միջոցաւ խստիւ յանդիմանում է պատրիարքական տեղակալ Ստեփան եպիսկոպոսին և Զէյթունի Պօլսոյ պատգամաւորութեանը. իսկ Հայ ժողովրդի յուզումները դադարացնելու համար 1863 Մարտ 17 - ին վերադարձնում է հաստատուած Սահմանադրութիւնը պատուիրելով ըստ այնմ՝ վարել ազգային եկեղեցական գործերը:

Վերահաստատեալ սահմանադրութեան համեմատ ամբողջ Տաճկահայոց ներկայացուցիչը լինելու էր Կ. Պօլսոյ Երեսփոխանական ժողովը, որի անդամների թիւը 140 է: Առյանից 20 Պօլսոյ հոգեւորականներից են՝ աշխարհական երեսփոխաններից 40-ը գաւառների, իսկ 80 - ը Կ. Պօլսոյ համար են, որոնցից գոնէ 7 - ը Հայ ազգաւ տաճիկ աստիճանաւորներ պէտք է լինին:

Իւրաքանչիւր գումարուելի ժողովի նպատակը յայտնի պէտք է լինի և թոյլտուութիւն ստացուած:

Սահմանադրական վարչութեան գլուխն է պատրիարքը, իսկ կենդրոնը՝ պատրիարքարանը. Սահմանադրութեան տրամադրութեամբ թէ կենդրոնում և թէ գաւառներում չորս ժողով պէտք է լինին. ա. ընդհ. երեսփոխանական ժողով՝ (Կ. Պօլսում) և գաւառական ընդհ. ժողով՝ (առաջնորդական քաղաքներում) ր. կրօնական ժողով, գ. քաղաքական ժողով և դ. խառն (կրօնական և քաղաքական) ժողով: Բոլոր ժողովները բացի կրօնականից ունին մի մի ընտրուած աշխարհական ատենապետ, որոնք առանձին խորհուրդ են կազմում, որ Ատենապետաց ժողով է կոչւում, ժողովների նախագահը կենդրոնում՝ պատրիարքն է:

իսկ գաւառներում՝ առաջնորդը:

Վերահաստատեալ Սահմանադրութեան տրամադրութեամբ Կ. Պօլսոյ երեսփոխանական ժողովը պէտք է ի կողմանէ տաճկահայ մասնակցէ Էջմիածնի կաթողիկոսական ընտրութեանը և ընտրէ երուսաղէմայ պատրիարք՝ երուսաղէմայ միաբանութեան ներկայացրած անանջատ միաբանների ցանկից: Թէ Կ. Պօլսոյ և թէ երուսաղէմայ պատրիարքը պէտք է լինին ի հօրէ տաճկահայաստակ և պատրիարքութեան յատկացեալ (Էջմիածնոյ) եպիսկոպոսներից:

Պատրիարքական տեղակալ Սահիբան՝ եպիսկոպոսը Սահմանադրութեան համեմատ ժողովները կազմելուց յետոյ, 1863 Հոկտմբ. 15 - ին նոր պատրիարքի ընտրութեան համար երեսփոխանական ժողով գումարեց, և պատրիարք ընտրուեց Զմիւռնիոյ արքեպիսկոպոս Պօղոս Թաթաւազեան, որի նախագահութեամբ երես. ժողովը 1864 Օգոստ. 14 ին ըստ Սահմանադրութեան՝ երուսաղէմայ միաբանութեան ներկայացրած ցանկից ընտրեց երուսաղէմայ պատրիարք Եսայի վարդապետին՝ որ նոյն թուին Կ. Պօլսոյ վերայով ուղևորուեց Էջմիածին և եպիսկոպոսանալով՝ Դեկտմբ. 3 - ին հասաւ Կ. Պօլիս:

Եսայի պատրիարքի առաջին գործն եղաւ եգիպտոսում եղած երուսաղէմական կալուածների համար հոգալ: Եգիպտոսի փոխարքայի արտաքին գործոց պաշտօնեայ հայազգի Նուբար - Փաշան խոստացաւ գործը կարգի դնել, եթէ Եսայի երուսաղէմ յիւրադառնալիս՝ նախապէս հանդիպի եգիպտոս. բայց Եսայի շտապելով 1865 թուի Զատիկի օծինն երուսաղէմում լինել, չըկարողացաւ եգիպտոս գնալ, որով և, կալուածական գործը սկսեց ձրգձգուել և եգիպտահայք որոշեցին այդ կալուածոց հասոյթը իրանց կարեաց գործ ամել, առարկելով թէ կալուածներն՝ ազգային սեպհականութիւն են և իրանք ևս ազգ: Յետոյ Եսայի պատրիարք անձամբ գնաց եգիպտոս, քանի անգամ վարդապետներ ուղարկեց, բայց ոչինչ չըկարողացաւ յաջողեցնել: Միայն վերջ ի վերջոյ եգիպտահայք յանձն առան վանքին թողնել այն կալուածները միայն, որոնք վանքի անունովն են գնուած, և այն՝ ոչ բոլորը:

Երուսաղէմայ պատրիարքական խնդիրը նոր էր վերջացել և ահա ծագեց Սոյ և Աղթամարայ կաթողիկոսական խնդիրը:

1864 - ին մի գիշեր գնտակահար սպանուեց Աղթամարայ Պետրոս կաթուղիկոսը, և նոյն գիշերը ոմն Խաչատուր եպիսկոպոս կաթուղիկոս օծուեց: Ախճանուեց և Սսի կաթուղիկոսը և ոմն Նիկողայոս եպիսկոպոս ինքնագլուխ կաթուղիկոս օծուեց: Երբ տաճկահայք այս ինկիրներովն էին զբաղուած, Մատթէոս կաթուղիկոսն ևս, որ իւր Ժողովրդասէր բնաւորութեամբ վանքերի հասոյթները հոգեւոր դպրոցներին յատկացնելով հոգարարձունք էր հաստատում և Մայր Աթոռումն նոր պարտիկ հիմունքներ լրել տալով պատրաստուում էր շինութեան ձեռք զարկել, 1865 Սեպտեմբեր 22 - ին վախճանուեց և թաղուեց Ս. Պայխանէի վանքի գաւթում:

Այսպիսով բոլոր ազգին զբաղեցնող ինկիրն եղաւ ընդհանրական նոր հայրապետի ընտրութիւնը, իսկ Պօլսոյ պատրիարքարանի գործը՝ թէ ընդհանրական հայրապետի ընտրութեանը մասնակցել և թէ Սոյ ու Աղթամարայ ինքնակոչ կաթուղիկոսների դասը տեսնելուց յետոյ այդ աթոռների համար կարգադրութիւն անել:

Կ. Պօլսոյ ազգային երեսփոխանական Ժողովը թէև որոշել էր Էջմիածնի կաթուղիկոսարանի վիճակը, և կաթուղիկոսական ընտրութեան երանակը քննելուց յետոյ սահմանել թէ տաճկահայք ինչպէս պէտք է մասնակցեն կաթուղիկոսական ընտրութեանը, սակայն առանց կատարելու իւր որոշումը, ի կողմանէ տաճկահայոց մի հոգեւորական և մի աշխարհական անձն ուղարկելով Էջմիածին մասնակցեց 1866 Սեպտ. 17 - ին կաթուղիկոսական ընտրութեանը, որով երբեմն սրտաբարբ Բրուսայի Գէորգ Արքեպիսկոպոսը իբրեւ առաջին ընտրեալ և Աստրախանի Մատթէոս արքեպիսկոպոսը իբրեւ երկրորդ ընտրեալ առաջարկուեցին ինկատողութիւն և ի հաստատութիւն թագաւոր կոյսեր առաջին ընտրեալ Գէորգ արքեպիսկոպոսը հաստատուեց կաթուղիկոս:

ԴԼ. ԺԵ.

Գէորգ Դ. Կ. Պօլսեցի 1867 - ին գարնանը Կ. Պօլսից ուղևորուեց գէպի Էջմիածին և Մայիսի 21 - ին Ս. Օծումն ընդունելուց յետոյ ռուսահայոց քաղաքները այցելելու և թագաւոր կայսերը ներկայանալու շատուեց: 1868 - ին Գէորգ Դ. վերադառնա-

լով Էջմիածին, «Արարատ» ամսագրի հրատարակութիւնը կարգադրեց և յանուն շինութեան Մայր Աթոռոյ հանգանակութիւն սկսելով, ձեռք զարկեց զանազան շինութեանց, շինեց տաճարի արեւմտեան սրմին կից երեք բաժանմամբ Թանգարանը:

Ամուսնութեան խնդիրը զգուշաւոր քննութեամբ կատարելու և ապագային ծագելիք խռովութեանց առաջքը առնելու համար նշանադրութեան կանոններ հրատարակեց: Առաջադրեց որ թեմական և վանական դպրոցներում աւարտողները միայն քահանայ ձեռնադրուին. քահանայացուներին պարտաւորական գիտելի գարձրեց նաև ձայնադրութիւնը, բայց կարգադրութիւնը քահանայից վերաբերութեամբ անթերի չը կատարուելով, վերջին ժամանակները տգէտ և ձայնագրութիւն չը գիտեցող քահանաների թիւը յափից դուրս աւելացաւ: Ըստ բաւականի կանոնաւորեց վիճակային և աթոռային ել և մտից հաշուապահութիւնը և վանականների գոյքը վանքերին մնալու համար 1868 թուին փոխել տուեց Պօլսթենիայի այն յօդուածները՝ որոնցով վանականների գոյքը նոցա ազգականներին էր մնում:

1873 - ին թեմական տեսչութիւններ հաստատելով՝ հայ զբոսորդական գործը բաւական կանոնաւորեց և դպրոցաց համար հրահանգներ իսկ թեմական տեսուչների համար կանոններ հրատարակեց:

Գէորգ Գ. հայաբնակ քաղաքներից 1873 - ին մի մի քահանայացու բերել տալով Էջմիածին, հրաւիրեց Կ. Պօլսից հայկական ձայնագրութեան հմուտ Նիկողայոս Թաշճեանին ձայնագրութիւն սորվեցնելու: Նիկողայոս Թաշճեան ժառանգաւորաց դպրոցում մի տարուայ ընթացքում ձայնագրութիւնը քահանայացուներին և Մայր Աթոռոյ ժառանգաւորներին ուսուցանելուց յետոյ ձայնագրեց նաև եկեղեցական պաշտամանի բոլոր երգեցողութիւնը և վերադարձաւ Կ. Պօլիս:

Գէորգ Գ. վիճակներից հրաւիրուած և ձայնագրութիւն ուսած քահանայացուներից ոմանց դպրութեան աստիճան տալով և ոմանց ևս քահանայ ձեռնադրելով ուղարկեց իրանց տեղերը՝ որ դպրոցներում ուսուցանեն և ընդհանրացնեն ձայնագրութիւնը, ի գիւրութիւն՝ հրատարակեց բոլոր ձայնագրեալ երգեցողութեան մատենաները և պարտաւորական զարձրեց քահանայացուներին, մատենից գինը ձեմարանի արդեանց յատկացնելով: Ընդարձակեց

Մայր Աթոռոյս տպարանը, և ձուլարան և ս հաստատելով՝ հրատարակեց ինչպէս եկեղեցական նոյնպէս և նախնեաց ձեռագիր գրութեան լի մասը: Գրապարանի առաջ մի ընդարձակ դահլիճ պատրաստեց ընթերցանութեան համար:

Վանքի արեւելեան կողմը պարսպից դուրս 1869 թուին հիմնարկած ձեմարանը 1874 - ին քաց արեց Աստրախանի հայ ժողովրդեան օժանդակութեամբ:

1874 թուին շինեց նաև Բիւրականի հայրապետական ամարանոցը, իսկ 1879 - ին ձեմարանի ընդարձակ ննջարանը, արեւմտեան կողմից ընդարձակեց Ներսէսի անտառը և շուրջանակի պարսպեց լճի շուրջը և վանքի պարսպից դուրս՝ հիւսիսային կողմը պարտէզներ ձգել տուեց: Իւր նախաձեռնութեամբ վերաշինուեց Սշականայ եկեղեցին՝ ուր է Ս. Մեսրոպ թարգմանչի գերեզմանը, իսկ եկեղեցու նաւակատեաց հանդէսը հրամայեց կատարել սրբոց թարգմանչաց տօնի օրը, 1879 թուին, տօն և ուխտ հաստատելով:

Գէորգ Գ. կաթողիկոս որչափ ներքին - ազգային եկեղեցական գործերում տոկուն եռանդեամբ աշխատումէր, նոյնքան և զգոյշ ու պահպանողական գրութիւն էր պահպանում արտաքին յարաբերութեանց ժամանակ:

Հռովմայ քահանայապետ Պիոս Թ. եկեղեցւոյ բարեկարգութեան սլատրուակով 1869 Գեկում. 8 ին որոշել էր տիեզերական ժողով գումարել Վատիկանում, ուստի և ժողովին մասնակցելու համար իւր նուիրակների ձեռքով հրաւիրել էր արեւելեան եպիսկոպոսներին, ընդ որս և տաճկահայոց եպիսկոպոսներին:

Պօղոս պատրիարք և տաճկահայոց եպիսկոպոսները պապի հրաւերին պատասխանեցին՝ որ ժողովին մասնակցելու խնդիրը իրանց իրաւասութիւնից բարձր է, և Եջմիածնի ընդհանրական հայրապետի տնօրէնութիւնից է կախուած, և մի և նոյն ժամանակ խնդրեցին կաթողիկոսի տնօրէնութիւնը: Գէորգ Գ. կոնգակով պատուիրեց Պօղոս պատրիարքին և պատրիարքարանի միջոցաւ բոլոր հայ եպիսկոպոսներին — զգուշանալ և չընդունել պապական ժողովին մասնակցելու հրաւերքը, յայտնելով թէ ժողովը լինելու չէ եկեղեցու օգտին, այլ նկրտելու է պապական փառասիրութեանը յագուրգ տալու: Եւ արդա՛րև ժողովի վճիռը, շատ տորաձայնութիւնից և բռնաւորական ստիսմաւնքից յետոյ,

եղաւ ընդունել եկեղեցու մէջ պապի անսխալականութիւնը և դերիշխանութիւնը իբրեւ հաւատոյ վարդապետութիւն։ Պապական եկեղեցին սկսեց խռովութեամբ ալէկոծուել՝ որովհետեւ շատ շատերը որպէս վերագրեալ այդ յատկութիւնները միայն Աստուծոյ ստորոգելիք համարելով ամենայն եռանդեամբ հակառակ գինուեցին։

Հայ կաթողիկ եկեղեցին ևս սկսեց խռովութեամբ ալէկոծուել և ժողովուրդը երկու կուսակցութեան բաժանուեց Հատունեան և Հակահատունեան։ Հատունեանք ընդունեցին պապի անսխալականութեան վարդապետութիւնը, և նորա իրաւասութիւնը՝ հայ կաթողիկ եկեղեցու վարչային ներքին կառավարութեան մէջ։

Հատունեանց պարագլուխ Անտոն Հասուն Կ. Պօլսոյ հայ կաթողիկ պատրիարքութեան հետ 1868-ին իւր անձին մէջ միացնելով Ախրանանու կաթողիկոսութիւնը, թէ՛ Ախրանանու կաթողիկոսութիւնը և թէ՛ պատրիարքութիւնը զօրացրեց և այդ զօրութեամբ զօրացած՝ սկսեց ծառայել միայն Հռոմմայ հաճերին, որով և առելի գարձաւ հայ կաթողիկ հասարակութեան այն մասին՝ որ ձգտումէր մայր եկեղեցւոյ ծէսերն ու ժամերգութեան ձևը և հայ կաթողիկ եկեղեցւոյ առանձնութիւնը անաղարտ և զերծ պահել յաթմակահանից։

Հատունեանք պապի անսխալականութիւնը ընդունող և նոցանից բանադրուած Հակահատունեաններին մերժուած էին համարում պապական եկեղեցւոյ, և ձգտումէին բոլորովին տիրապետել հայ կաթողիկ եկեղեցեաց, իսկ Հակահատունեանք Հատունեաններին էին մերժուած համարում հայ կաթողիկ եկեղեցւոյ պնդելով թէ՛ հայ կաթողիկ եկեղեցին երբ որ կազմակերպուեց՝ պապի անսխալականութիւնը իբրեւ եկեղեցւոյ վարդապետութիւն ընդունուած չէր և հայ կաթողիկ եկեղեցին կազմակերպուեց՝ մայր եկեղեցու արարողութիւնները անաղարտ պահելու պայմանով, արդուրեմն հայ կաթողիկ եկեղեցին ընդունելով պապի անսխալականութիւնը և նորա միջամտութիւնը եկեղեցւոյ ներքին վարչական գործերին՝ մերժումէ նաեւ անսխալականութեան սկզբունքին հեռւողներին՝ որոնք հայ կաթողիկ եկեղեցու մէջ նոր հերձուած են կազմում։

Այս վէճերի ժամանակ Բարձրագոյն Նուռը տեսնելով որ պապի իշխանութիւնը թուլացած է և բոլոր Եւրոպան նորան հակառակ

է՛ր իւր իշխանութեան ոյժը յօգուտ Հակահասունեանց գործ զրեց։ Խնդիրը Հասունեան և Հակահասունեան կուսակցութեան մէջ թէ՛ և աւելի ևս խճճուեց, բայց Հասուն իւր անխնայ աշխատանոց համար Հռովմ կոչուելով՝ կարգինադական կոչումն և ծիրանի ստորաց և նորան յաջորդեց Աղաբեան։

Մինչ Կ. Պօլսոյ կաթուղիկ հայք զբաղուած էին Հասունեան և Հակահասունեան խնդիրներով, հայապատան հայք ևս զբաղուած էին Սսի Նիկողայոս և Աղթամարայ Խաչատուր ապօրինի կաթուղիկոսների խնդրով. սոքա երկուքն էլ իրանց նախորդների եղբրական մահից յետոյ բռնաբար, առանց ընտրութեան էին օծուել։ Սսի Նիկողայոսը գահընկէց լինելով ուղարկուեց Արմաշու Զարխափան Ս. Աստուածածնի վանքը իսկ Աղթամարայ կաթուղիկոսը արգարանալով՝ վերագործու իւր պաշտօնատեղին, պայմանու՝ որ ինքնագլուխ եպիսկոպոս չը ձեռն ագրէ։ Բացի սորանից Կ. Պօլսեցւոց զբաղեցնումէր Սսի Աղթամարայ և Էջմիածնի կաթուղիկոսների միմեանց հետ յարաբերութեան խնդիրը։

Գէորգ Դ. հաստատուելուց յետոյ, դեռ Կ. Պօլսումն էր պահազան խորհրդածութիւններից յետոյ որոշուեց*) 1, Սսի և Աղթամարի կաթուղիկոսների ընտրութիւնը կատարել նոցա վիճակայինների ձեռքով և Կ. Պօլսոյ ընդհ. ժողովի միջոցաւ առաջարկել ընդհանրական հայրապետին ի հաստատութիւն. 2, Սսի և Աղթամարի կաթուղիկոսները օծումն ստանան Էջմիածնում. 3, Սսի և Աղթամարայ կաթուղիկոսները ընդհ. հայրապետի հաճութեամբ միայն իրանց թեմերի համար եպիսկոպոս ձեռնադրեն. 4, Սսի և Աղթամարայ կաթուղիկոսները պատարագելիս՝ յիշեն Էջմիածնի կաթուղիկոսի անունը, իսկ նոցա թեմերում պատարագի ժամանակ առաջ Էջմ. կաթուղիկոսի անունը յիշուի. 5, Էջմիածնի կաթուղիկոսին միայն վերապահեալ լինի ամենայն Հայոց կաթուղիկոս ստորագրելը, և 6, Սսի և Աղթամարայ կաթուղիկոսները կրօնական խնդիրներում գիմեն Էջմիածնի կաթուղիկոսին։

Ընդհ. ժողովը իւր 1867 Փետր. 24 - ի նիստում չինքունելով այս որոշումները, չորս հոգեւորական ու չորս աշխարհական ան-

(*) Փորձ Ե. տարի. № 1. Ս. Էջմիածնի հայրապետական Աթոռ և Տաճկաստ. Հայր. 20—40.

ձինքներից մի մասնաժողով կարգեց որ առաջնագիրը Սսի և Աղթամարայ կաթուղիկոսների ընտրութեան կարգը և նոցա էջմիածնի կաթուղիկոսի ու Կ. Պօլսոյ պատրիարքարանի հետ ունենալիք յարաբերութիւնը։ Մասնաժողովիս որի անդամն էր Սիս ձեռնադրուած Ներսէս եպիսկոպոս Վարժապետեան, ներկայացրեց իւր տեղեկագիրը, առաջարկելով օրինաւոր համարել Սսի և Աղթամարի կաթուղիկոսներին և նոցա իրաւունքը հաւասարել էջմիածնի կաթուղիկոսի հետ։

Գէորգ Գ. որ այս ժամանակ էջմիածնումն էր, լսելով մասնաժողովի հզրակացութիւնը, 1868 Ապրիլ ամէն մի կոնդակով յայտնեց իւր զարմացքը մասնաժողովի հզրակացութեան վերայ, որով Հայաստանեայց եկեղեցւոյ միութիւնը երեքի էր բաժանուած և յաւելացրեց որ, եթէ Սսի և Աղթամարի կաթուղիկոսները, ինչպէս առաջուց որոշուած է, էջմիածնին և նորա գահակալներին հպատակութիւն չեն ցոյց տալ, ստիպուած կըլինի հակաթու և ապօրինաւոր համարել նոցա։ Այս կոնդակը կարգացուեց Կ. Պօլսոյ եկեղեցիներում, և հետեւանքն այն եղաւ՝ որ մասնաժողովի տեղեկագիրը չընդունուեց։

Տաճկաց կառավարութիւնը կամենումէր Սսի կաթուղիկոսութիւնը զօրացնել, և երբ Պօլսոս պատրիարք վերաքննեալ Սահմանադրութեան հաստատութեան յապաղման պատճառով իբրև հակառակմանագրական ոք 1869 Յունվար 23 - ին պարտաւորուեց հրաժարուել, կառավարութեան ցանկութեանը հակամէտ երեսփոխանները պատրիարքական ընտրելեաց ցանկում դրեցին նաև Սոս եպիսկոպոս Ներսէս Վարժապետեանի անունը, այս բանը տեսնելով՝ ընդհ. ժողովի երեսփոխան ութն եպիսկոպոսներ՝ անմիջապէս դուրս եկան ժողովից՝ և հեռագրեցին Գէորգ կաթուղիկոսին, իսկ նա հայոց եկեղեցւոյ կանոնների ու առանդութեանց այս օրինակ զեղծմանց համար իսկոյն բողոքեց *)։

Վերջապէս Արիստակէս եպիսկոպոս կարճամասնակեաց տեղապահ կարգուեց և էջմիածնին ուխտեալ եպիսկոպոսների վերայ քուէարկութիւն կատարուելով Իգնատիոս եպիսկոպոս պատրիարք ընտրուեց որ դեռ չըհաստատուած՝ վախճանուեց 1869 Սեպտեմբ.

(*) Փորձ Ե. տարի. № I. Ս. էջմիածնի հայրապետական Աթոռ և Տաճկաստ. Հայք. 32։

4 - ին և պատրիարք ընտրուեց Գլակայ Ա. Կարապետի վանահա-
ռ. Տարօնոյ եպիսկոպոս Մկրտիչ Խրիմեան: 1870 Յունւար 2 - ին
կոնդակով Քէ.որգ. Գ. շնորհաւորելով նորընտիր պատրիարքին՝
շնորհեց նորան արքեպիսկոպոսի կոչումն յորդարելով Մայր Աթո-
սի իրաւանց և շահերին նախանձախնդիր լինել: չը թոյլ տալով
Արս. ձեռնադրութենքին առանց Էջմիածնին հաւատարմութեան
երգումն տալու Սոյ թեմից դուրս պաշտօն վարել:

Կաթուղիկոսի այս կանգակը, որ ոչ եկեղեցիներում և ոչ ան-
գամ պատրիարքարանի ժողովներում կարգացուեց, զանազան
թիւր մեկնութեանց պատճառ գարձաւ: որպէս թէ Սոյ կաթու-
ղիկոսութեան համար մէջը գրուած լինէր « թոյլ տուք մեռելոց
թաղել գմբեսալս իւրեանց » խօսքերը: Պատրիարքը չը հերքեց
թիւր ենթադրութիւնները: որովհետեւ կամենումէր ժողովրդեան
առելութիւնը դէպի Էջմիածին սաստկացնել տալով՝ զօրացնել
Սոյ կաթուղիկոսութիւնը:

Երեսօխոնական ժողովի անդամներից ոմանք պատրիարքի
հետ կամենումէին Կ. Պօլսոյ ընդհ. ժողովով ընտրել Սոյ կաթու-
ղիկոս: իսկ ոմանք ընդհակառակն պնդումէին՝ որ Սսի կաթուղիկո-
սութեանը ընդհանուր նշանակութիւն չը տրուի: Երկուր վիճարա-
նութիւնից յետոյ հասկ տրեմն ընդհ. ժողովի որոշմամբ Երուսա-
ղէմայ պատրիարքութեան Կ. Պօլսոյ փոխանորդ Սաքարեան Ար-
մէօն եպիսկոպոսը գնաց Կիլիկիա: Ազանայում 1871 Հոկտմ.
22 - ին գաւառական ժողովով Երուսաղէմայ անջատեալ միաբան,
Էջմիածնի եպիսկոպոս և Փերմանիկի (Մարաշ) առաջնորդ Մկրտիչ
եպիսկոպոսին ընտրեց կաթուղիկոս: և ընտրութեան լուրը պատ-
րիարքարանին հաղորդելով՝ պատրիարքարանի հաճութեամբ կա-
թուղիկոս օծեց:

Պատրիարքարանը այս մասին ոչ միայն չը հարցրեց ընդհանրա-
կան կաթուղիկոսի հաճութիւնը: որ մի Էջմիածնի եպիսկոպոս
հակառակ իւր Էջմիածնին հաւատարմութեան ուխտին Սոյ կա-
թուղիկոս է ընտրուել: այլ և ոչ տեղեկութիւն տուեց: ուստի
Քէ.որգ. Գ. կաթուղիկոս Գեկտ. 11 - ին հեռագրով յանուն պատ-
րիարքի յայտնեց՝ որ պատրիարքարանը և ազգային ժողովը Սսի
գործերով անպիսի խնդիրների է լուծումն տալիս: որ նոցա
իրաւասութիւնից վեր է: և եղբակացնումէր. « Ոչ մեր եկեղեցւոյ
կանոնները և ոչ մենք: չենք կարող օրինաւ որ ճանաչել այդպիսի մի

որոշումն և նորա վնասակար հետևանքների առաջը առնելու համար զգուշացնումենք ձեզ չըշեղուել սուրբ հայրերի շաղկից *) :

Քէորգ Դ. կաթուղիկոս տեսնելով որ պատրիարքաւորները գրեթէ անհետեանք թողեց իւր ազգարարական հեռագիրը և գրութիւնները Սոյ ինգրի առիթով, եպիսկոպոսների երգման թղթի մէջ աւելացրեց հակաթոռ և հետեալ համարել Սոյ և Աղթամարայ կաթուղիկոսութիւնները, և ձեռնադրութեան ժամանակ մանաւանդ տաճկաստանցի եպիսկոպոսներին շեշտելով յիշեցնումէր որ հաւատարիմ մնան իրանց երգմանը և Խրիմեանի սէս հակառակ հաւատարմութեան երգմանը չը փարուեն :

Խրիմեան Էջմիածնին հակառակ փորձուէքով, իւր անհաշիւ գործաւարութեամբ և Բերայի գերեզմանատունը կառավարութեանը յանձնելու տրամադրութեամբ կորցրել էր իւր համարումը, և պիտի պաշտօնանկ լինէր, սակայն հաւանական ընտրելին, որ Ներսէս եպիսկոպոս Արքեպիսկոպոսն էր, Սոյ եպիսկոպոսներից լինելով՝ պատրիարքայու եպիսկոպոսաց շարքից (Էջմիածնի եպիսկոպոս) չէր, Այս խակ ժամանակ պատահեց Սամաթիայի եկեղեցւոյ հրկիզութիւնը և Ներսէս ռուսահայերից նպատակ հանգանակելու համար գալով Էջմիածին՝ 1872 Մայիս ամսում Էջմիածնի Մայր Աթոռին հաւատարմութեան երդում արեց Սուրբ Էջման տեղի առաջ և վերագառնալով Կ. Պոլիս՝ ընտրուեց պատրիարք՝ երբ Խրիմեան 1873 Հոկտ. 2 - ին պարտաւորեալ եղաւ հրաժարուիլ :

Ներսէսի պատրիարքութիւնը նշանաւոր եղաւ 1877 - 1878 թ. Ռուս-Տաճկական պատերազմի ժամանակ Հայոց՝ բարենորոգմանը ձգտելովը : Ան-Ստեփանոյի գաշնագրի մէջ Ռուսաց կառավարութիւնը զիջանելով Ներսէս պատրիարքի և առհասարակ նշանաւոր հայերի թախանձանաց՝ յաւելացրեց 16 - րդ յօդուածը, որով Բարձրագոյն Դուռը բարենորոգումներ պիտի մտցնէր Տաճկաց Հայաստանում և ժողովրդի կենաց և գոյից ապահովութիւնը երաշխաւորեալ պիտի լինէր : Այնուհետեւ Ներսէս Խրիմեան Մկրտիչ և Նար - Բէյ Խորէն արքեպիսկոպոսներին Եւրոպա ուղարկեց եւրոպական տէրութեանց գթութիւնը հայցելու, և Բերլինի վեհաժողովի գաշնագրի մէջ Ան - Ստեփանոյի գաշնագրի 16 - րդ

(*) Փորձ Ե. տարի № 1. երես 37.

յօդուածի համեմատ 61 - րդ յօդուածը յաւելացաւ, որով տանկայ կառավարութիւնը հայտրնակ գաւառներում բարենորոգումներ պէտք է մտցնէր և այս բարենորոգմանց համար եւրոպական մեծ տէրութեանց տեղեկութիւն պիտի տար:

Բերլինեան դաշնագրի համեմատ թէև թէ Բարձրագոյն Դուռը և թէ պատրիարքարանը առանձին առանձին պատուիրակներ ուղարկեցին Հայաստան տեղական հանգամանաց համեմատ բարենորոգմանց ծրագիր կազմելու բայց ոչինչ բարեկարգութիւնք տեղի չունեցան և Բարձրագոյն Դուռը պատրիարքարանի առաջարկութիւնները գրեթէ միշտ անկատար էր թողնում. հարտահարութիւնք աւելի ևս յաճախութեամբ սկսեցին տեղի ունենալ Հայաստանում, և վիճակաց առաջնորդները իբրև տէրութեան առաջ կատկածելի անձինք կառավարութեան հրամանով Պօլիս տարուեցին ի գիպահոջ մնալու համար:

Սաի կաթուղիկոսին, որին իւր գործոց մասին պատասխան տալու համար պատրիարքարանը Պօլիս էր բերել տուել, Բարձրագոյն Դուռը պատրիարքարանից անկախ հրաման տալով յետ դարձրեց Կիլիկիա, Ներսէս պատրիարք Բարձ. Դրան այս տեսակ ցուրտ յարաբերութիւնը, հայ ժողովրդեան հարստահարութիւնը, վիճակաց անառաջնորդ մնալը, և Կիլիկիոյ կաթուղիկոսի գրեթէ ինքնիշխան գառնալը տեսնելով, 1881 Նոյեմբեր 13 - ին իւր հրաժարականը ներկայացրեց ազգային ժողովին և Բարձրագոյն Դրանը, և իբրև մասնաւոր մարդ տպրումէր իւր տանը. և մինչ ազգային ժողովը ընդունելով պատրիարքի հրաժարականը կամենումէր նոր պատրիարք ընտրել, Ներսէս պատրիարք Սիմօն Մաքսուտ պէյի միջոցաւ մեծ եպարքոսի հետ անսակցութիւն ունենալով՝ Բարձ. Դրան հաճութեամբ նորից ստանձնեց պատրիարքական իշխանութիւնը:

Հրաժարականը ընդունուելուց յետոյ միայն Բարձ. Դրան հաճութեամբ Ներսէսի պատրիարքութիւն ստանձնելը թէև հակառակ էր ազգային իրաւանց, սակայն ազգը իրաւանց այս ոտնհարութիւնը զոհեց զէպի Ներսէսը ունեցած սիրոյն և Ներսէսի նորից պատրիարքութեամբ ուրախացած ինչան երախտագիտութեան մաղթանքներ կատարեց Սուլթանի բարօրութեան համար, և Ներսէս նորից ստանձնելով պատրիարքութիւնը խոստանումէր աւելի ևս եռանդեամբ աշխատել, բայց իւր բոլոր ջանքը նա իրելով միայն ներքին գործերին:

Երբ Կ. Պօլսոյ պատրիարքարանը միայն զհասանների հետ յարաբերութեամբ և պատերազմի պատճառով՝ բարենորոգմանց խնդիրներովն էր զբաղուած, Գէորգ Գ. արտաքին յարաբերութիւններից իբրև խոյս տուող մարդ իւր ներքին հայրապետական գործերովն էր զբաղվում միայն:

Նա 1877 թուին համարեա երկու ամսից աւելի հայրական սիրով պատասպարեց Ալաշկերտի բոլոր գաղթականներին՝ մինչև որ նորա միջոց ունեցան իրանց համար տեղ գտնելու: Բնագաւառ Ալաշկերտցոց հանգանակուած գրամները արքունի դրամատանը շահեցնելով՝ որոշեց տոկոսը Միացեալ Րնկերութեան միջոցաւ գործադրել Ալաշկերտում եղած դպրոցների համար: 1879—1880 թուի սովի ժամանակ կերակրեց Մայր Աթոռս գիւմը պանդուխտ սովեալներին, ցորեան մասնատրեց Աթոռոյս սեպհական գիւղօրէից ուտելու և սերմանելու համար, և թէև մեծ ցին էր առաջարկվում՝ բայց չը կամեցաւ վաճառել աւելորդ ցորեանը, յապագային զգուշութեան համար, որով շատ զգոհութեան տեղի տուեց:

1882 Դեկտմ. 6 - ին վեցամսեայ ծանր հիւանդութիւնից լիտոյ վախճանուեց Գէորգ Գ. կաթուղիկոս, և զանազան քաղաքայ պատգամաւորների ներկայութեամբ նոյն ամսի 12 ին թաղուեց Էջմիածնի զանգակատան հիւսիսային կողմը:

Յ. Վ. Մ.

Վ. ԵՐ Զ.